12.3/485128

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

0010, Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1

<<_____>> _____ 2018թ.

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար
պարոն Զոհրաբ Մնացականյանին

Վարչապետի աշխատակազմի ղեկավար
պարոն Էդուարդ Աղաջանյանին

Համաձայն ՀՀ վարչապետի 2018թ. հոկտեմբերի 27-ի «Ղազախստանի Հանրապետություն պատվիրակություն գործուղելու մասին» N 1431-Ա որոշման 7-րդ կետի՝ կից Ձեզ է ներկայացվում պատվիրակության՝ Աստանա գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը:

Առդիր՝ 5 էջ:

Հարգանքով՝

Invalid signature

X

Պաշտոնակատար՝ Signed by: MIRZOYAN ARARAT 3311790138 Արարատ Միրզոյան

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք թիվ ԿՀ-04/62915
«13» 11 2018թ.

Հաշվետվություն
2018 թվականի նոյեմբերի 1-3-ը ք. Աստանա (Ղազախստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. ***Անունը, Ազգանունը***

Արարատ Միրզոյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

ՀՀ առաջին փոխվարչապետի պաշտոնակատար

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

Աստանա (Ղազախստանի Հանրապետություն) 2018թ. նոյեմբերի 1-3-ը

4. ***Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)***

Մասնակցություն ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին:

5. ***Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը***

2018թ. նոյեմբերի 2-ին տեղի է ունեցել երկկողմ հանդիպում Ղազախստանի վարչապետ Բակիտժան Սագինտայեվի հետ: Երկուստեք կարևորել ենք երկու երկրների միջև համագործակցության շարունակական զարգացումն ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կազմակերպությունների և ինտեգրացիոն միավորումների շրջանակում, արձանագրել ենք, որ հայ-ղազախական առևտրատնտեսական հարաբերություններում առկա են աճի միտումներ և տնտեսական փոխգործակցության հետագա զարգացման մեծ ներուժ:

Ղազախստանի վարչապետի հետ քննարկել եմ Ղազախստանից Հայաստան բենզին և ցորեն ներկրելու հնարավորության հարցը: Անդրադարձել եմ նաև ԼՂ կարգավորման խնդրին և անընդունելի համարել հարցի ընդգրկումը զանազան կազմակերպությունների օրակարգում, ինչպիսիք են օրինակ Իսլամական համագործակցության կազմակերպությունը և Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը: Ընդգծել եմ, որ հարցի կագավորման միակ ընդունված հարթակը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափն է:

Առանձնակի անդրադարձել են հայ - ղազախական հարաբերություններում ղազախահայ համայնքի դերակատարմանը:

Հանդիպման ընթացքում քննարկել ենք տնտեսական երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ, ինչպես նաև նախանշել համագործակցությունը հարստացնելու նոր գործնական ուղղություններ: Քննարկել ենք ներդրումային համատեղ ծրագրեր իրականացնելու, էներգետիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների, մշակույթի ոլորտներում հետագա համագործակցության հետ կապված հարցեր:

Պատվիրակության անդամներ փոխվարչապետի պաշտոնակատար Մհեր Գրիգորյանը, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար Գարեգին Բաղրամյանը, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը, արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը հնարավորություն ունեցան առարկայական հանդիպումներ ունենալ իրենց գործընկերների հետ, քննարկել էներգետիկային, տրանսպորտին, տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերող հեռանկարային մի շարք հարցեր:

ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նեղ կազմով նիստին հաջորդել է ընդլայնված կազմով նիստը: Նեղ կազմով նիստում հանդես եմ եկել ելույթով: Կարևորել եմ ԱՊՀ շրջանակում համագործակցության արդյունավետության բարձրացումն ու տարբեր ուղղություններով կապերի խորացումը և նշել, որ անհրաժեշտ է իրականացնել պրակտիկ քայլեր ԱՊՀ-ի ներուժը տարածաշրջանային համագործակցության զարգացման ուղղությամբ իրացնելու համար, ինչն իր հերթին մեծապես կնպաստի ազգային տնտեսությունների մրցունակության, քաղաքացիների բարեկեցության բարձրացմանը, հումանիտար կապերի զարգացմանը:

6. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, ստորագրված փաստաթղթերը

Ընդլայնված կազմով նիստի ընթացքում քննարկվել են օրակարգում ընդգրկված հարցերը (օրակարգը կցվում է), որին հաջորդել է փաստաթղթերի ստորագրման արարողությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության անունից ստորագրել եմ 5 համաձայնագիր և մոտ մեկ տասնյակ որոշումներ, որոնք վերաբերում էին տնտեսության, էներգետիկայի, հարկային վարչարարության, ինովացիոն, տիեզերական հետազոտությունների, մշակութային-հումանիտար

ոլորտներին: Չեմ ստորագրել օրակարգում ընդգրկված փաստաթղթերից երկուսը՝ «ԱՊՀ տնտեսական դատարանի գործունեության որոշ հարցերի մասին» ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշման նախագիծը, քանի որ 2006թ.-ից Հայաստանի Հանրապետությունը չի հանդիսանում ԱՊՀ տնտեսական դատարանի անդամ, ինչպես նաև «Ուրանի հանքարդյունահանման ազդեցությանն ենթարկված պետությունների տարածքների վերականգնման» ԱՊՀ միջպետական նպատակային ծրագրում փոփոխություններ կատարելու մասին ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշման նախագիծը, քանի որ ՀՀ-ում չկան ուրանի հանքաարդյունաբերության հետևանքով ռեկուլտիվացիայի ենթակա տարածքներ:

Գործուղվող՝

Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Ա.Միրզոյան

Ստորագրություն, ամսաթիվ

06.11.2018թ.

ПОВЕСТКА ДНЯ
заседания Совета глав правительств
Содружества Независимых Государств

2 ноября 2018 года **город Астана**

ДЛЯ РАССМОТРЕНИЯ В УЗКОМ ФОРМАТЕ

1. Обмен мнениями *(по желанию)* по актуальным вопросам экономического взаимодействия в Содружестве Независимых Государств.

2. О проведении очередного заседания Совета глав правительств Содружества Независимых Государств.

ДЛЯ РАССМОТРЕНИЯ В ШИРОКОМ ФОРМАТЕ

3. О Соглашении о взаимодействии государств – участников СНГ по обеспечению готовности на случай ядерной аварии или возникновения радиационной аварийной ситуации и взаимопомощи при ликвидации их последствий.

4. О внесении изменений в Межгосударственную целевую программу «Рекультивация территорий государств, подвергшихся воздействию уранодобывающих производств».

5. О Концепции сотрудничества государств – участников СНГ по развитию производства высокотехнологичного энергетического оборудования и Плане основных мероприятий по ее реализации.

ДЛЯ ПОДПИСАНИЯ БЕЗ ОБСУЖДЕНИЯ

6. О Соглашении о взаимодействии по профилактике и ликвидации очагов болезней и вредителей леса на приграничных территориях государств – участников СНГ.

7. О Соглашении об осуществлении совместной деятельности государств – участников Содружества Независимых Государств в области исследования и использования космического пространства в мирных целях.

8. О Протоколе об обмене информацией в электронном виде между государствами – участниками СНГ для осуществления налогового администрирования.

9. О Порядке распределения прав на объекты интеллектуальной собственности, созданные в результате реализации межгосударственных инновационных проектов и мероприятий в рамках Межгосударственной программы инновационного сотрудничества государств – участников СНГ на период до 2020 года.

10. О финансировании в 2019 году Плана мероприятий по реализации Основных направлений дальнейшего развития медико-социальной помощи и повышения качества жизни ветеранов войн – участников локальных конфликтов и членов их семей в государствах – участниках СНГ на период до 2020 года.

11. Об ассигнованиях на создание и развитие объединенной системы противовоздушной обороны государств – участников Содружества Независимых Государств:

11.1. Об использовании ассигнований на создание и развитие объединенной системы противовоздушной обороны государств – участников Содружества Независимых Государств и обеспечение деятельности Координационного Комитета по вопросам противовоздушной обороны при Совете министров обороны государств – участников Содружества Независимых Государств в 2017 году.

11.2. О выделении ассигнований на создание и развитие объединенной системы противовоздушной обороны государств – участников Содружества Независимых Государств в 2019 году.

12. О финансовом обеспечении деятельности органов Содружества Независимых Государств:

12.1. О некоторых вопросах деятельности Экономического Суда Содружества Независимых Государств.

12.2. Об исполнении единого бюджета органов Содружества Независимых Государств за 2017 год.

12.3. Об изменении размеров долевых взносов государств – участников Содружества Независимых Государств в единый бюджет органов СНГ.

12.4. О едином бюджете органов Содружества Независимых Государств на 2019 год.

13. О Плане приоритетных мероприятий в сфере гуманитарного сотрудничества государств – участников СНГ на 2019–2020 годы.

14. О Плане мероприятий по реализации Соглашения о сотрудничестве государств – участников СНГ в области обращения с отходами электронного и электротехнического оборудования от 1 июня 2018 года.

15. О Протоколе о внесении изменений в Соглашение о сотрудничестве в развитии и использовании систем сотовой подвижной связи от 17 января 1997 года.